ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 266 – Ա **06 հուլիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ>>-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության և ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 3-ի N 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

06.07.2020

ԳԵՎ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020 թ. հուլիսի 6 -ի

N 266-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության>> մարզային մրցութային հանձնաժողովի

03 հուլիսի 2020թ. **ք. Գավառ**

2020 թվականի հուլիսի 3-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Զոհրաբյան
Քարտուղար՝ Գ. Խաչատրյան
Անդամներ՝ Ն. Մանուկյան
Կ. Բաղդասարյան
Լ. Գևորգյան

Օրակարգում

1. Մարտունի(Ա/Կ)-Գեղհովիտ-Մարտունի N26 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը դադարեցնելու մասին:
2. Մարտունի(Ա/Կ)-Արծվանիստ-Մարտունի N22, Մարտունի(Ա/Կ)-Զոլաքար-Մարտունի N25 և Մարտունի(Ա/Կ)-Աստղաձոր-Մարտունի N40 ներմարզային ավտոբուսային երթուղիները սպասարկող ավտոբուսները փոխարինելու մասին:

Քննարկվեց

<<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲ ընկերության տնօրենի 2020 թվականի հունիսի 29-ի գրությունը՝

1. Մարտունի(Ա/Կ)-Գեղհովիտ-Մարտունի N26 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը դադարեցնելու վերաբերյալ հարցը:

Նկատի ունենալով, որ ուղևորահոսքի բացակայության պատճառով երթուղու սպասարկումը դարձել է ոչ շահավետ, ուստի <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲ ընկերությունը առաջարկում է դադարեցնել Մարտունի(Ա/Կ)-Գեղհովիտ-Մարտունի N 26 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը:

2. Ելնելով երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակից <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲ ընկերությունը առաջարկում է Մարտունի(Ա/Կ) - Արծվանիստ-Մարտունի N22 ներմարզային ավտոբուսային երթուղու հիմնական ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-672Մ մակնիշի, 365US16 պետհամարանիշի (10-52Լ դեղին հիմնագույնի համարանիշ), 1985 թվականի արտադրության ավտոբուսով, իսկ Մարտունի(Ա/Կ)-Զոլաքար-Մարտունի N25 և Մարտունի(Ա/Կ)-Աստղաձոր-Մարտունի N 40 ներմարզային երթուղիների պահուստային ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-32054 մակնիշի 34FU912 պետհամարանիշի (10-48Լ դեղին հիմնագույնի համարանիշ), 2005 թվականի արտադրության ավտոբուսով:

Հանձնաժողովը որոշեց՝

1.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի պահանջները՝ դադարեցնել Մարտունի(Ա/Կ)–Գեղհովիտ–Մարտունի N 26 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝ Մարտունի(Ա/Կ)–Արծվանիստ–Մարտունի N22 ներմարզային ավտոբուսային երթուղու հիմնական ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-672Մ մակնիշի, 365US16 պետհամարանիշի (10-52Լ դեղին հիմնագույնի համարանիշ), 1985 թվականի արտադրության ավտոբուսով, իսկ Մարտունի(Ա/Կ)–Զոլաքար–Մարտունի N25 և Մարտունի(Ա/Կ)–Աստղաձոր–Մարտունի N40 ներմարզային երթուղիների պահուստային ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-32054 մակնիշի 34FU912 պետհամարանիշի (10-48Լ դեղին հիմնագույնի համարանիշ), 2005 թվականի արտադրության ավտոբուսով (հիմք՝ <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենի 2020 թվականի հունիսի 29-ի գրությունը):

3. Մարտունի(Ա/Կ)–Գեղհովիտ–Մարտունի N 26 ներմարզային ավտոբուսային երթուղին հայտարարել թափուր:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Զոհրաբյան

Քարտուղար՝ Գ. Խաչատրյան

Անդամներ՝ Ն. Մանուկյան

Կ. Բաղդասարյան

Լ. Գևորգյան